

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-ԻՆ
ԿԱՅԱՑԱԾ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՅՔԻ ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ
ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան

Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

- S. Սարգսյան ՀՀ վարչապետ (խորհրդի նախագահ)
- Ա. Գևորգյան ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
- Ն. Երիցյան ՀՀ Էկոնոմիկայի նախարար
- Գ. Սարգսյան ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
- S. Դավթյան ՀՀ ֆինանսների նախարար
- Գ. Դանիելյան ՀՀ արդարադատության նախարար
- Ե. Զախարյան ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
- Հ. Բեգլարյան ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ

Հրավիրվածներ՝

- Դ. Սարգսյան ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
- Ա. Բախշյան ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ
- Ս. Ղոնադյան ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
- Ռ. Վարդանյան ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
- Է. Ավետյան ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն

Ա. Մայսուրյան

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի
միջազգային տնտեսական համագործակցության բաժնի պետ

Ա. Գաբրիելյան

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի
միջազգային տնտեսական համագործակցության բաժնի
առաջին կարգի մասնագետ

1. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման
կազմակերպության (ՄԻԿ) ձևավորման մասին

(Ն. Երիցյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ներքո ստեղծել Հյուսիս-Հարավ
ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն
(ՄԻԿ).

2) հաստատել Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի
իրականացման կազմակերպության աշխատակազմի ընտրության մրցութային հանձնա-
ժողովի անհատական կազմը՝ հանձնաժողովի կազմում ընդգրկելով նաև «Ճանապարհային
անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի գործադիր տնօրեն Պողոս Շահինյանին.

3) հավանություն տալ ՄԻԿ-ի տնօրենի պաշտոնի խմբագրված նկարագրին և,
գիտելիքներ և որակավորում բաժնում կատարելով հետևյալ փոփոխությունները՝

ա. պահանջվող մասնագիտությունների շարքը «տնտեսագիտության» բառից հետո
լրացնել «ճարտարագիտության» բառով,

բ. անգլերենի գրավոր և հաղորդակցության բանավոր գերազանց իմացության
պահանջը փոխարինել անգլերենի իմացության պահանջով,

գ. հանել միջազգային կազմակերպությունների, մասնավորապես, Ասիական զարգացման բանկի, Համաշխարհային բանկի և այլ դոնոր կազմակերպությունների նպատակների, գործառույթների և ընթացակարգերի իմացության պահանջը,

դ. հանել բիզնեսի և դրա գործընթացների համակողմանի իմացության և փորձի պահանջը.

4) հանձնարարել` ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Գ. Սարգսյանին`

ա. մեկշաբաթյա ժամկետում ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել համապատասխան ՀՀ կառավարության որոշման նախագիծ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպության (ՄԻԿ) ձևավորման մասին,

բ. մեկշաբաթյա ժամկետում հայտարարել ՄԻԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթը,

գ. հայտարարել ՄԻԿ-ի աշխատակազմի համալրման բոլոր մրցույթները:

2. Երևանի քաղաքային տրանսպորտի ծրագրի իրականացման կառավարումը Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդին վերապահելու մասին

(Ն. Երիցյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն.Երիցյանին` Երևանի քաղաքային տրանսպորտի ծրագիրը ձևափոխել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի երկայնքով համայնքային զարգացման ծրագրի և դրա իրականացման կառավարման գործառույթները վերապահել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդին:

3. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի աշխատանքների կազմակերպման և գործունեության թափանցիկության վերաբերյալ

(Ն. Երիցյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել`

1) ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին` ապահովել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի նիստերին ՀՀ ԱԺ-ի պատգամավորների (առանց քվեարության ձայնի իրավունքի) մասնակցությունը.

2) ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Գ. Սարգսյանին` մեկամյա ժամկետում ապահովել Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը լուսաբանող ինտերնետային կայք-էջի հիմնումը.

3) նոր ստեղծվող ԾԻԿ-ին` Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդին ներկայացնել ծրագրի իրականացման կիսամյակային հաշվետվություններ և դրանք տեղակայել ինտերնետային համապատասխան կայք-էջում:

4. Ծրագրի առաջին տրանշի շրջանակներում իրականացված մրցույթների արդյունքների մասին

(Է. Ավետյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց`

1) հաստատել`

ա. մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման նպատակով խորհրդատվական ընկերության մրցույթի արդյունքները,

բ. ճանապարհային ծածկի միջազգային մասնագետի ընտրության մրցույթի արդյունքները.

2) հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն Է. Ավետյանին՝ բանակցություններ վարել մրցույթների հաղթողների հետ և կնքել համապատասխան պայմանագրեր:

5. 1-ին փուլի շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողության և 2-րդ փուլի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման աշխատանքներն իրականացնող խորհրդատվական ընկերության ընտրության մասին

(Ն. Երիցյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել՝

1) Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի անդամներին՝ երկշաբաթյա ժամկետում ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն.Երիցյանին ներկայացնել առաջարկություն՝ 1-ին փուլի շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողության և 2-րդ փուլի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման աշխատանքներն իրականացնող խորհրդատվական ծառայությունների տեխնիկական առաջադրանքի վերաբերյալ.

2) ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին՝ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի անդամների կողմից ստացված առաջարկությունների հիման վրա լրամշակել տեխնիկական առաջադրանքը և դրա վերջնական

լրամշակված տարբերակը ներկայացնել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներ-
դրումային ծրագրի կառավարման խորհրդի հաստատմանը:

Լ ր ա ց ու ց ի չ հ ա ր ց

6. Նախնական վերաբնակեցման պլանի կազմման և օտարման գոտին որպես գերակա
շահ ճանաչելու գործընթացների մասին զեկույց

(Ն. Երիցյան Ս. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար
Ն. Երիցյանին՝ մշակել վերաբնակեցման պլանի գործողությունների ժամանակացույց, այն
համաձայնեցնել ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Ա. Գևորգյանի և ՀՀ արդարադատության նախարար Գ. Դանիելյանի հետ և վերջնական
փոխհամաձայնեցված տարբերակը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության
աշխատակազմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
(ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Մ.ԹՈՒՄԱՍՅԱՆ